ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Նախաբան

Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) 2023 թվականի գործունեությունն առաջին հերթին ուղղված է եղել Հայաստանի երկրորդ Վավերացման աշխատանքների նախապատրաստմանը և դրա անցկացմանը:

Հունիսի 29-ին կայացել է ԱՃԹՆ բազմաշահառու խմբի 2023թ. առաջին նիստը, որն ամփոփել է վավերացման աշխատանքների արդյունքները՝ արտացոլված ԲՇԽ-ի բոլոր խմբակցությունների և ազգային քարտուղարության կողմից լրացված վավերացման երեք հարցաթերթերում: Նիստը ընդհանուր կոնսենսուսով հաստատել է հարցաթերթերի պատասխանները և դրանցում նշված ԲՇԽ-ի ինքնագնահատականները, որի հիման վրա դրանք հուլիսի 1-ին տրամադրվել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության վավերացնող թիմին՝ սկսելու համար Հայաստանի 2-րդ վավերացման գործընթացը:

Վերը նշված նիստին հաստատվել է նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների(ՏՀԲ) էլեկտրոնային համակարգի ստեղծման տեխնիկական առաջադրանքը: Այն ընդունվել է նաև երկրի թվայնացման խորհրդի կողմից և քննարկվել Համաշխարհային բանկի մասնագետների հետ: ՏՀԲ-ի էլեկտրոնային համակարգի ստեղծման աշխատանքները կմեկնարկեն 2024 թվականին

Ազդակիր համայնքների(բնակավայրերի), ինչպես նաև լիազոր մարմինների համար մայիսի 4-6-ը Ծաղկաձորում անցկացվել է եռօրյա աշխատաժողով՝ ռոյալթիներից կատարվող մասհանումներից ստացված գումարների հաշվին համայնքների (բնակավայրերի) սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումներ և ծրագրեր կազմելու կարողությունները զարգացնելու նպատակով:

2023թ. հունիսի 12-15-ը Դաքարում (Սենեգալ) տեղի է ունեցել Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության 9-րդ գլոբալ համաժողովը, որին մասնակցել է Հայաստանի պատվիրակությունը: Պատվիրակության կազմում համաժողովին մասնակցել են Հայաստանի ազգային քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը, ԱՃԹՆ-ի Բազմաշահառու խմբի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ Նազելի Վարդանյանը, ԶՄՊԿ-ի կայուն զարգացման գծով տնօրենի տեղակալ Ասյա Ղազարյանը, «Հետք»-ի հետաքննող լրագրող Քրիստինե Աղալարյանը:

Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը հուլիսի 17-ից 20-ը ընդունել է Հայաստանի ԱՃԹՆ-ի փորձի ուսումնասիրման նպատակով Երևանում գտնվող ԱՃԹՆ-ի Տաջիկստանի բազմաշահառու խմբի պատվիրակությանը, որը գլխավորում էր Տաջիկստանի ԱՃԹՆ-ի ազգային համակարգող Յազդոնզոդա Իսֆանդիյորը:

2023թ. դեկտեմբերի 7-8-ը Ջերմուկում «Հանքարդյունաբերության սոցիալ տնտեսական ազդեցությունը համայնքներում, Հայաստանի պարտավորությունները որպես Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության անդամ երկիր» թեմայով կազմակերպվել է երկօրյա մարզային հանդիպում Սյունիքի, Գեղարքունիքի, Կոտայքի, Վայոց ձորի մարզերի հանքարդյունաբերական համայնքների շահագրգիռ կողմերի՝ քաղաքացիական հասարակության անդամների, արդյունահանող ընկերությունների, ՏԻՄ ներկայացուցիչների, ԲՇԽ-ի, լիազոր պետական մարմինների ներկայացուցիչների հետ:

2023թ. դեկտեմբերի 14-15-ը Ալավերդիում կազմակերպվել է նույն թեմայով երկրորդ երկօրյա մարզային հանդիպումը Լոռու և Տավուշի մարզերի հանքարդյունաբերական ազդակիր համայնքների շահագրգիռ կողմերի համար:

Հայաստանի ԱՃԹՆ-ի համար կարևոր իրադարձություն է հանդիսացել այն, որ առաջիկա 3 տարիներին Հայաստանը ներկայացված է լինելու ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդում՝ ՀՀ ԱՃԹՆ համակարգող Լուսինե Թովմասյանն ընտրվել է որպես ԱՃԹՆ-ի խորհրդի՝ եվրոպական երկրների խմբակցությունը ներկայացնող անդամ:

1. Հասանելի և արդիական տեղեկատվության ապահովում

Միջոցառումներ 1-8

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքը շարունակել է հանդիսանալ ԱՃԹՆ-ի տեղեկատվության տարածման և դրա հասանելիության ապահովման հիմնական միջոցը: Կայքի բովանդակությունը պարբերաբար թարմացվել է, հրապարակվել և հանրությանը իրազեկվել են ոլորտին վերաբերվող նորությունները, նոր իրավական ակտերը, ԱՃԹՆ-ի փաստաթղթերը, այլ տեղեկություններ: Օտարալեզու օգտվողների համար կայքի կարևոր տեղեկատվությունը թարգմանվել է անգլերեն:

Կայքում հրապարակվել է ԱՃԹՆ-ի ընթացիկ գործունեությունը լուսաբանող 10 նորություն[1] ԱՃԹՆ-ի տեղական և միջազգային գործընթացների, մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ, դրանցից կարևորները հրապարակվել են նաև անգլերեն լեզվով: Շարունակաբար թարմացվել են Facebook[2], YouTube[3] և X (Twitter)[4] ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը:

Հայաստանի ԱՃԹՆ-ի լուսաբանման, իրազեկման և արդեն միջազգային հանրայնացման համար կարևոր նշանակություն է ունեցել 2023թ. հունիսի 12-15-ը Դաքարում (Սենեգալ) կայացած Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության 9-րդ գլոբալ համաժողովը, որին մասնակցել է Հայաստանի պատվիրակությունը: Պատվիրակության կազմում համաժողովին մասնակցել են Հայաստանի ազգային քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը, ԱՃԹՆ-ի Բազմաշահառու խմբի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ Նազելի Վարդանյանը, ՀՄՊԿ-ի կայուն զարգացման գծով տնօրենի տեղակալ Ասյա Ղազարյանը, «Հետք»-ի հետաքննող լրագրող Քրիստինե Աղալարյանը:

Համաժողովին[5] Հայաստանի Հանրապետությունը ներկայացվել է որպես առաջամարտիկ երկիր՝ ԱՃԹՆ-ի մի շարք բարդ պահանջների իրականացման գծով: Պանելային քննարկումների և ներկայացումների ժամանակ ընդգծվել է Հայաստանի գերազանց առաջընթացը Ստանդարտի հետևյալ պահանջների բավարարման մասով՝ արդյունահանման պայմանագրերի

[1] https://www.eiti.am/hy/Նորություններ
[2] https://www.facebook.com/EITIArmenia/
[3] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A
[4] https://twitter.com/EITI_Armenia
[5] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2023/06/20/armenia-in-eiti-global-conference-in-dakar/144/

թափանցիկության ապահովման, իրական շահառուների բացահայտման նորարական համակարգի ներդրման, հանրության համար բաց տվյալները հասանելի դարձնելու և տվյալների օգտագործումը խրախուսելու գործում:

Համաժողովի օրակարգային, ինչպես նաև առանձին թեմատիկ պանելային քննարկումների շարքում, մասնավորապես «Փոփոխությունների ընդունում. 2023 ԱՃԹՆ-ի ստանդարտի առջև ծառացած ուղին» վերնագրով հիմնական պլենար նիստին, նորարական զրույցների հարթակում, Հայաստանի ազգային Հայաստանի ազգային տաղավարում քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը ներկայացրել է Հայաստանի փորձը:

Գլոբալ Համաժողովում Հայաստանի ԱՃԹՆ-ի համար կարևոր իրադարձություն է հանդիսացել այն, որ առաջիկա 3 տարիներին Հայաստանը ներկայացված է լինելու ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդում՝ ՀՀ ԱՃԹՆ համակարգող Լուսինե Թովմասյանն ընտրվել է որպես ԱՃԹՆ-ի խորհրդի՝ եվրոպական երկրների խմբակցությունը ներկայացնող անդամ:

Իրազեկման բովանդակություն է ունեցել նաև հաշվետու ժամանակահատվածում ազդակիր համայնքների (բնակավայրերի) ներկայացուցիչների համար անցկացված ռոյալթիներից մասհանումների հաշվին սոցիալ–տնտեսական զարգացման ծրագրեր կազմելու կարողությունների զարգացման աշխատաժողովը-դասընթացը[6], որի ժամանակ մասնակիցները իրազեկվել են ԱՃԹՆ-ի Ստանդարտի՝ այդ մասով պահանջների և դրանց ապահովման եղանակների մասին: Աշխատաժողով-դասընթացն անց է կացվել մայիսի 4-6-ը Ծաղկաձորում:

Պատրաստվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի ներկա ընթացքն ու արդյունքները լուսաբանող տեսահոլովակ, որի աշխատանքները սկսվել են ապրիլի սկզբին, երբ նախապատրաստվել է հոլովակի նկարահանման տեխնիկական առաջադրանքը: Դրա հիման վրա հայտարարված մրցույթի արդյունքներով ընտրված կազմակերպության պատրաստած հոլովակը ընդունվել է հունիսի 14-ին, որից հետո այն մեկական շաբաթ հեռարձակվել է մարզային երկու հեռուստաալիքների միջոցով՝ Լոռու և Զանգեզուրի համայնքներում:

Իրազեկման և կարողությունների զարգացմանն է ուղղված եղել 2023թ. դեկտեմբերի 7-8-ը Ջերմուկում «Հանքարդյունաբերության սոցիալ տնտեսական ազդեցությունը համայնքներում, Հայաստանի պարտավորությունները որպես Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության անդամ երկիր» թեմայով կազմակերպված երկօրյա մարզային հանդիպումը[7] Սյունիքի, Գեղարքունիքի, Կոտայքի, Վայոց ձորի մարզերի հանքարդյունաբերական համայնքների շահագրգիռ կողմերի՝ քաղաքացիական

---

6 https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2023/05/08/royalty-workshop-may-4-6/141/

7 https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2023/12/11/regional-meeting-in-Jermuk/146/

հասարակության անդամների, արդյունահանող ընկերությունների, ՏԻՄ ներկայացուցիչների, ԲՇԽ-ի, լիազոր պետական մարմինների մոտ 30 ներկայացուցիչների հետ:

2023թ. դեկտեմբերի 14-15-ը Ալավերդիում կազմակերպվել է նույն թեմայով երկրորդ երկօրյա մարզային հանդիպումը[8] Լոռու և Տավուշի մարզերի հանքարդյունաբերական ազդակիր համայնքների շահագրգիռ կողմերի համար: Այս հանդիպմանն էլ են մասնակցել 30 հոգի:

Նշված հանդիպումների ժամանակ մասնակիցներին ներկայացվել են ԱՃԹՆ-ի ներդրման արդյունքում հանրային հասանելի դարձած տվյալները և դրանց օգտագործման կարևորությունը՝ կառավարչական և հանրային որոշումներ կայացնելու համար: Ներկայացվել են նաև ԱՃԹՆ-ի 2023թ. նոր ստանդարտով երկրների և ընկերությունների նկատմամբ սահմանվող լրացուցիչ պահանջները և քննարկվել են Հայաստանի կողմից դրանց կատարման հնարավորությունները:

Մինչև ԱՃԹՆ-ի առցանց հրապարակային հաշվետվությունների պարտադիր ներկայացման վերջնաժամկետը՝ օգոստոսի 1-ը, հաշվետվությունների լրացման և ծագող տեխնիկական խնդիրների հետ մասով մշտական խորհրդատվություն է ներկայացվել հաշվետու ընկերություններին և լիազոր մարմիններին:

Հայաստանի ԱՃԹՆ-ի 5-րդ՝ 2022թվականը ներկայացնող ազգային զեկույցի կազմման աշխատանքները տեղափոխվել են 2024 թվական, որի պատճառների մանրամասները ներկայացված սույն հաշվետվության 2.2 բաժնում:

Համաշխարհային բանկի դրամաշնորհի աջակցությամբ իրականացված աշխատանքների ամփոփիչ միջոցառումը չի իրականացվել, քանի որ նշված դրամաշնորհի ժամկետը երկարաձգվել է մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը, ուստի միջոցառումը կիրականացվի 2024թ. դեկտեմբերին:

2. Հաշվետվողականության և հանրային վերահսկողության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում

[8] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2023/12/18/eiti-regional-meetings-december-2-23-lori/147/

2.1. Հայաստանի ԱՃԹՆ-ի անդամակցության կարգավիճակի պահպանում

Միջոցառումներ 9-27

2023թ. հունիսի 29-ին կայացել է ԲՇԽ-ի նիստը[9], որը անց է կացել Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ վավերացումի նախօրեին: Այս հանգամանքով պայմանավորված նիստի օրակարգի առաջնային հարցերից մեկը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն ուղարկվելիք վավերացման հարցաթերթիկների բովանդակության և դրանցում ԲՇԽ-ի ինքնագնահատականի հետ կապված քննարկումներն էին:

Նիստում արձանագրվել է, որ լրացված հարցաթերթիկները պետք է առավելագույնս արտացոլեն Հայաստանի ԱՃԹՆ-ի անցած 3 տարվա անցած ճանապարհը, որի վերաբերյալ ԱՃԹՆ-ի միջազգային համայնքն ունի արդեն ձևավորված կարծիք՝ Հայաստանը համարվում է ԱՃԹՆ-ի առաջատար երկրներից մեկը: Նիստը նախագահող, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հ.Հարությունյանը արձանագրել է, որ չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի բազմաշահառու խումբը դեռ աշխատանքի մեծ ծավալ ունի իրականացնելու համար, այնուամենայնիվ, Հայաստանը կարողացել է ապահովել ԱՃԹՆ-ի Ստանդարտի բոլոր պահանջները և հուսով է, որ վավերացման միջազգային թիմի գնահատականը էականորեն չեն փոփոխի Հայաստանի գրված դիրքը:

ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը ներկայացրել է խմբակցության դիրքորոշումը, համաձայն որի՝ չնայած հունիսին Դակարում կայացած ԱՃԹՆ գլոբալ համաժողովում պարբերաբար Հայաստանը նշվել է որպես առաջատար և օրինակելի երկիր, բայց ԲՇԽ-ն պետք է պահանջկոտ լինի և ընդունի, որ, առկա նիստերի սակավաթիվ լինելը ազդել է հանքարդյունաբերության ոլորտում ընթացող գործընթացների վրա ազդելու ԲՇԽ-ի հնարավորությունների վրա:

Ընդհանուր կոնսենսուսով ԲՇԽ-ի անդամները ընդունել են Վավերացման լրացված հարցաթերթերի նախագծերը[10] (և դրանցում նշված ԲՇԽ-ի ինքնագնահատականները՝ երկու պահանջի գծով՝ «գերազանցված», մեկ պահանջի գծով՝ «հիմնականում բավարարված», մնացածի մասով՝ «լիովին բավարարված»), ինչպես նաև հայտարարություն[11]՝ առկա նիստերի

[9] https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents

[10] https://drive.google.com/drive/folders/1CtSbCYW3DIDJUxG264W58hOJJD3HfsGb

[11] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_announcement-on-MSG-Meetings-29062023.pdf

հաճախականության մասին, ըստ որի այսուհետ պետք է խստորեն պահպանվի ԲՇԽ-ի աշխատակարգում սահմանված տարեկան առնվազն 3 առկա նիստ անցկացնելու պահանջը:

Նիստի ժամանակ բազմաշահառու խումբն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) հաստատել է նաև ՀՀ ԱՃԹՆ-ի 2022 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակների առաջընթացի հաշվետվությունների և 2021-2022թթ. աշխատանքային ծրագրի կատարողականը[12], ինչպես նաև ՀՀ ԱՃԹՆ-ի 2023-2024 թվականների աշխատանքային ծրագիրը[13] և ազգային առաջնահերթությունները:

Նիստի օրակարգի կարևոր հարցերից էր նաև տվյալների համակարգված բացահայտումների տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքների ընթացքը, որի վերաբերյալ ԲՇԽ-ն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) հաստատել է ներկայացված ՏԲՀ տեղեկատվական համակարգի տեխնիկական առաջադրանքը և առաջարկվող մրցութային հանձնաժողովի կազմը: ԱՃԹՆ ազգային քարտուղարության առաջարկով ԷԿԵՆԳ-ի ներկայացուցիչը համաձայնել է նախագահել մրցութային հանձնաժողովը, որի կազմում պետք է ընդգրկվեն ԲՇԽ-ի ՔՀ և բիզնես խմբակցությունների, ազգային քարտուղարության, ՊԵԿ-ի ներկայացուցիչներ:

Նիստում քննարկվել են նաև ԱՃԹՆ-ի ընթացիկ գործունեության հետ կապված այլ հարցեր, որոնց վերաբերյալ իրենց դիրքորոշումն են հայտնել բազմաշահառու խմբի՝ կառավարության, ընդերքօգտագործող ընկերությունների և քաղաքացիական հասարակության խմբակցությունների անդամները: Նիստի ժամանակ քննարկված հարցերը և արտահայտված կարծիքները գրանցվել են նիստի արձանագրության մեջ, որը հրապարակվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում[14]:

---

[12] https://www.eiti.am/hy/%D4%B1%D5%83%D4%B9%D5%86-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80/

[13] https://www.eiti.am/hy/%D4%B1%D5%83%D4%B9%D5%86-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80/

[14] https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents

Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության կազմում տեղի են ունեցել փոփոխություններ՝ կազմը 2023թ. ապրիլի 29-ից լքել է Լիլյա Շուշանյանը, իսկ հունվարի 20-ից որպես հիմնական անդամ համալրել է Անահիտ Սիմոնյանը, որը հանդիսանում է «Մարդու իրավունքների հետազոտության կենտրոն» ՀԿ-ի տնօրենը: 2023թ. հունվարի 20-ից քաղաքացիական խմբակցության կազմում որպես հիմնական անդամ վերընտրվել է Նազելի Վարդանյանը, «Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ-ի տնօրենը, Վիկտորյա Բուռնազյանը, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի փոխնախագահը: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Սոնա Այվազյանը վերընտրվել է որպես ԱՃԹՆ ԲՇԽ-ի ՔՀԽ այլընտրանքային անդամ:

Հիմք ընդունելով ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի աշխատակարգի 14-րդ հոդվածը՝ 2023թ. մայիսին լրանում էր ԲՇԽ-ի բիզնես խմբակցության 6 հիմնական և այլընտրանքային անդամների(Արթուր Նիկողոսյանի, Մանվել Եղիազարյանի, Արտյոմ Պետրոսյանի, Արամ Օսիկյանի, Վահե Վարդանյանի, Գագիկ Շահնազարյանի) նշանակման 3 տարին, ուստի նշված խմբակցությունը պետք է ներկայացներ նոր թեկնածություններ՝ ԲՇԽ-ի կազմը համալրելու համար, սակայն խմբակցությունը դա չի արել:

2023թ. օգոստոսին լրացել է նաև Հայաստանի ակադեմիական շրջանակները ներկայացնող ԲՇԽ-ի քաղաքացիական խմբակցության անդամ Սուրեն Ներսիսյանի ժամկետը, որին փոխարինող նոր թեկնածություն ՔՀ խմբակցությունը չի ներկայացրել:

Բազմաշահառու խումբը իր 2023թ. հունիսի 29-ի նիստում ընդունել և հաստատել է նաև ԲՇԽ-ի Աշխատակարգի նոր խմբագրությունը[15]:

2023թ.ընթացքում ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի այլ հանդիպումներ տեղի չեն ունեցել, անդամների միջև անհրաժեշտ հաղորդակցությունն ու համաձայնեցման ենթակա հարցերի քննարկումները տեղի են ունեցել էլեկտրոնային կապի միջոցներով:

ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության 2023 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքները իրականացվել են՝ համաձայնեցնելով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ու Համաշխարհային բանկի հետ՝ որպես դոնոր կազմակերպության: Այդ աշխատանքները, մասնավորապես, ներառել են հետևյալը.

Կազմակերպվել է և 2023թ. մարտի 2-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանն է վճարվել Հայաստանի տարեկան անդամակցության վճարը՝ 10 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով:

[15] https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%87%D4%BD-%D5%AB-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3

Մշակվել և Վարչապետի աշխատակազմ են ներկայացվել դրամաշնորհային ծրագրի հերթական եռամսյակային և տարեկան կատարողական հաշվետվությունները:

Պատրաստվել և հունվարի 30-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն են ուղարկվել 2020 և 2021 թվականների համար ԱՃԹՆ թվային «Ամփոփ տվյալների» (Summart data) ֆայլերը, որոնք նաև հրապարակվել են ԱՃԹՆ-ի ազգային պաշտոնական կայքում[16]:

Հաշվետու ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ազգային քարտուղարությունը գլխավորապես զբաղվել է Հայաստանի 2-րդ վավերացմանը նախապատրաստվելով: Այդ նպատակով պարբերական աշխատանքային քննարկումներ են տեղի ունեցել ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության աշխատակիցների, Հայաստանի ԲՇԽ-ի խմբակցությունների անդամների, ինչպես նաև լիազոր մարմինների աշխատակիցների հետ, որոնց նպատակը եղել է նախքան վավերացումը շտկել բոլոր հնարավոր բացթողումները և անհամապատասխանությունները: Ուսումնասիրվել են նաև այլ երկրների կողմից լրացված վավերացման հայտերը, որպեսզի անհրաժեշտ պարզաբանումներ տրվեն ԲՇԽ-ի խմբակցություններին՝ վերջիններիս կողմից վավերացման հարցաթերթերի իրենց առնչվող բաժինները լրացնելու ժամանակ:

Ազգային քարտուղարությունը պատրաստել է նաև ԲՇԽ-ի հունիսի 29-ին կայացած նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ համար անհրաժեշտ տեղեկանքները, ԱՃԹՆ-ի 2021-2022թթ. աշխատանքային ծրագրի կատարողական հաշվետվությունը, 2023-2024թթ. աշխատանքային ծրագրի և ազգային առաջնահերթությունների նախագիծը, ԲՇԽ-ի Աշխատակարգի խմբագրված տեքստը, ինչպես նաև վավերացման հարցաթերթերի ամփոփ նախագծերը:

Հայաստանի միջազգային համագործակցության շրջանակում 2023թ-ին մի շարք հեռախոսային և առկա հանդիպումներ են տեղի ունեցել Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ՝ ԱՃԹՆ-ը ընդհանուր ընթացիկ աշխատանքները քննարկելու նպատակով: Այդ շարքում, մարտի 9-ին-ին տեղի է ունեցել հանդիպում Համաշխարհային բանկի լեռնահանքարդյունաբերության գծով գլխավոր համակարգող, հայաստանյան ծրագրի պատասխանատու Ռեմի Փելոնի հետ, որի ժամանակ քննարկվել և սկզբունքային համաձայնություն է ձեռք բերվել ՀԲ-ի դրամաշնորհի ժամկետը մինչև 2024թ. ավարտը երեկարաձգելու վերաբերյալ: Նշված բանավոր համաձայնությունը հիմք է հանդիսացել 2-րդ կիսամյակում երկարաձգման համար մեկնարկած անհրաժեշտ պաշտոնական նամակագրությունը վարելու համար, որի արդյունքում Համաշխարհային բանկի կողմից 2023թ. դեկտեմբերի 20-ի պաշտոնական նամակով հաստատվել է «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն. լրացուցիչ ֆինանսավորում» (EGPS Grant No. TF0B4808) դրամաշնորհի երկարաձգումը մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:

[16] https://www.eiti.am/hy/annual-reports/2022

Բացի վերը նշվածից, Հայաստանի ԱՃԹՆ ազգային քարտուղարություն է դիմել ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը՝ խնդրելով ընդունել Տաջիկստանի բազմաշահառու խմբի պատվիրակությանը՝ Հայաստանի փորձի ուսումնասիրման և փոխանակման համար: Տաջիկական պատվիրակության այցի հետ կապված ազգային քարտուղարությունը քննարկումներ է ունեցել նաև այցը ֆինանսավորող ամերիկյան Financial Sevices Volunteer Corps կազմակերպության Նյու Յորքի պատասխանատուների հետ: Հայաստանի ԲՇԽ-ի հունիսի 29-ին կայացած նիստը նույնպես անդրադարձել է տաջիկական պատվիրակության ընդունելության կազմակերպական հարցերին, որի հիման վրա համաձայնեցվել է այցի համապատասխան օրակարգը: Տաջիկական պատվիրակության այցը[17] կայացել է 2023թ. հուլիս 17-20-ը:

Պատվիրակության կազմում ընդգրկված էին 12 ներկայացուցիչ: Տաջիկստանի պատվիրակությունը հանդիպում ունեցավ Հայաստանի Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի, Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության, Բազմաշահառու խմբի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամների, Վարչապետի աշխատակազմի տարածքային զարգացման և շրջակա միջավայրի վարչության, Շրջակա միջավայրի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության և Համաշխարհային բանկի պատասխանատուների հետ:

Վավերացման գնահատականով ուղղիչ գործողություններ (առկայության դեպքում) չեն իրականացվել, քանի որ Հայաստանի 2-րդ վավերացման աշխատանքները ավարտվել են և Վավերացման գնահատականը Հայաստանի բազմաշահառու խմբին է տրամադրվել միայն 2024 թվականին:

2.2. ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի կազմում

Միջոցառում 28-35

Բազմաշահառու խմբի հունիսի 29-ին կայացած նիստի[18] ժամանակ անդրադարձ է կատարվել ԱՃԹՆ-ի հաջորդ ազգային զեկույցների ֆինանսավորմանը: Արձանագրվել է, որ Համաշխարհային բանկի կողմից տրամադրված դրամաշնորհի աջակցությամբ հնարավոր է ֆինանսավորել 2022թ. ազգային զեկույցի կազմումը, սակայն հետագա տարիների համար պետք է գտնել համապատասխան ֆինանսավորման աղբյուր: Նիստի մասնակիցները համաձայնել են, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ըստ ԱՃԹՆ-ի ստանդարտի, Հայաստանի ԱՃԹՆ-ն

---

17 https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2023/07/20/eiti-tajikistan-study-visit-to-armenia/145/

18 https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents

հնարավորություն ունի 5-րդ ազգային զեկույցը հրապարակել մինչև 2024թ.ավարտը, ԲՇԽ-ն այդ հարցի վերաբերյալ համապատասխան որոշումներ կայացնելու ժամանակ առաջիկայում կունենա:

Բացի դրանից, բազմաշահառու խմբի անդամները համաձայնել են ՀԲ դրամաշնորհով կազմվելիք ԱՃԹՆ-ի 5-րդ և մնացած զեկույցների նկատմամբ կիրառել հետևյալ մոտեցումը.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ դրամի հանդեպ ԱՄՆ դոլարի արժեզրկմամբ պայմանավորված նվազել են դրամաշնորհի փաստացի միջոցները, կոնկրետ 5-րդ զեկույցը է կարելի է կազմել՝ սահմանելով զեկույցի ավելի փոքր շրջանակ: Առաջարկվող մոտեցումը հնարավոր կլինի իրացնել, եթե Վավերացման արդյունքներով զեկույցների աշխատանքային շրջանակի ընդլայնում չպահանջվի, ինչպես նաև գործարկվի տվյալների համակարգված բացահայտումների (ՏՀԲ-ի) էլեկտրոնային համակարգը: ՏՀԲ-ի շահագործման դեպքում Հայաստանի ԱՃԹՆ-ն կունենա հրապարակվող թվային տվյալներ՝ ավտոմատ համադրման հնարավորությամբ, որի արդյունքում՝ ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի հետ համաձայնեցնելով հետագա զեկույցներից կարելի է հանել ֆինանսական համադրման առաջադրանքը՝ այդպիսով փոքրացնելով անկախ ադմինիստրատորի աշխատանքի ծավալը:

Բազմաշահառու խումբը գտել է, որ նախատեսվող տվյալների համակարգված բացահայտման համակարգը գործարկելուց հետո 2023 և մնացած տարիների տարեկան զեկույցների բովանդակությունը և ծավալը էականորեն փոխվելու են և ներկայումս դժվար է գնահատել դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը: Միևնույն ժամանակ, ԲՇԽ-ն վստահություն է հայտնել, որ ապագայում էլ կառավարության ուղղորդմամբ հնարավոր է գտնել այլ դրամաշնորհային միջոցներ:

2023 թվականի համար նախատեսված ԱՃԹՆ հերթական՝ 2022 ֆինանսական տարին ներկայացնող 5-րդ զեկույցի կազմման աշխատանքները հետաձգվել են, որը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը առաջարկել էր Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբին հետաձգել ԱՃԹՆ-ի հերթական՝ 5-րդ զեկույցի կազմման աշխատանքները այնպես, որ դրա տեխնիկական առաջադրանքում ներառվեն ԱՃԹՆ-ի վավերացման արդյունքում արձանագրվելիք հնարավոր բացերի շտկման առաջադրանքները (ուղղիչ գործողությունները), ինչպես նաև ԱՃԹՆ-ի 2023թ. ստանդարտի նոր պահանջներին վերաբերող առաջադրանքները: Իսկ Հայաստանի միջազգային 2-րդ վավերացման գործընթացը, որը սկսվել էր 2023թ. հուլիսի 1-ին՝ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից երկարաձգվել էր, և դրա նախնական գնահատականը Հայաստանի ԲՇԽ-ին տրամադրվել է միայն 2024թ. հունվարին: Հետևաբար, հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ ԱՃԹՆ-ի ազգային 5-րդ զեկույցի կազմման աշխատանքները հետաձգվել են 2024թ.:

Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում հրապարակվել է 2023 թվականի ԱՃԹՆ ստանդարտի հայերեն տարբերակը, որը բոլոր շահառուներին հասանելի է դարձրել Ստանդարտի համալրված մի շարք պարտադիր, ակնկալվող և խրախուսվող պահանջները, որոնք վերաբերում

են էներգետիկ անցմանը, եկամուտների հավաքագրմանը, հակակոռուպցիոն խնդիրներին, գենդերային, սոցիալական և բնապահպանական հարցերին: Այդ հարցերը ներկայացվել են նաև 2023թ. դեկտեմբերին Ջերմուկում և Ալավերդիում կայացած հանդիպումների մասնակիցներին:

2.3. Opening Extractives ծրագրի շրջանակում Իրական շահառուների տվյալների ճշգրության ստուգման գործիքների ներդրում և շահագրգիռ կողմերի կողմից տվյալների օգտագործման կարողությունների հզորացում

Միջոցառումներ 36-39

Ազգային քարտուղարությունը պարբերաբար անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրել այն ընկերություններին, որոնք մինչև 2023թ.-ի փետրվարի 20-ը ԻՇ հայտարարագրեր ներկայացնելու/թարմացնելու պարտավորություն են ունեցել ԻՇ հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային համակարգում[19] :

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից մոնիթորինգի է ենթարկել վերը նշված համակարգ մուտքագրված ԻՇ հայտարարագրերը, որի՝ 26.05.2023թ. դրությամբ գրանցված արդյունքների մասին կազմվել է տեղեկանք: Տեղեկանքը ներկայացվել է բազմաշահառու խմբին, իրավաբանական անձանց ռեգիստր, ինչպես նաև ՏԿԵՆ՝ հետագա ընթացք տալու համար:

Opening Extractives ծրագրի շրջանակում մայիսի 3-ին կայացել է Zoom քննարկում՝ Օփեն Օուներշիփ կազմակերպության, ԱՃԹՆ միջազգային քարտուղարության, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պատասխանատուների մասնակցությամբ: Քննարկման թեման Հայաստանի առաջընթացն էր՝ BODS (Beneficial Ownership Data Standard)-ի կիրառմամբ իրական սեփականության վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման գործում: Քննարկման արդյունքներով Օփեն Օուներշիփի թիմի կողմից պատրաստվել և տրամադրվել է Ռեգիստրում ներկայացված մի քանի հայտարարագրերի վերլուծությունը և դրանց դիտարկումը՝ BODS –ին համապատասխանելու տեսանկյունից: Օփեն Օուներշիփ կազմակերպությունը նաև պատրաստակամություն է հայտնել օգնելու ռեգիստրի աշխատակիցներին կամ էլեկտրոնային ռեգիստրը շահագործող VXSoft ընկերությանը՝ լուծելու առկա բացերը կամ այլ տեխնիկական խնդիրները՝ բարելավելու համար Հայաստանում իրական շահառուների մասին հավաքագրվող տվյալների որակը և հասանելիությունը:

2023 թվականի դեկտեմբերի 15-ին Օփեն Օուներշիփի միջազգային ռեգիստրը (Open Ownership Register) համալրվել է Հայաստանի հանքարդյունաբերող ընկերությունների իրական

[19] https://bo.e-register.am/am/auth

շահառուների վերաբերյալ բարձրորակ տվյալներով, որը իրականացվել է Opening Extractives ծրագրի շրջանակներում, որը Open Ownership-ի և EITI-ի համատեղ նախաձեռնությունն է՝ խթանելու համար իրական շահառուների վերաբերյալ տվյալների հասանելիությունն ու օգտագործումը ամբողջ աշխարհում:

2021 թվականին կայացած իրական շահառուների բացահայտման պահանջի միջազգային վավերացման 1-ին փուլի արդյունքներով՝ Հայաստանին նշանակվել էր ուղղիչ գործողություն[20]՝ 2022թ. հունվարից հրապարակել ընդերքօգտագործման թույլտվություն ունեցող կամ դրա համար դիմող բոլոր ընկերություններների նաև իրավական սեփականատերերի (մասնակիցների), այդ թվում՝ փակ բաժնետիրական ընկերությունների մասնակիցների մասին տեղեկությունները: Հարցը քննարկվել էր ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի 2022թ.-ին կայացած նիստում, ինչպես նաև պատասխանատու լիազոր մարմինների ներկայացուցիչների հետ կայացած հանդիպումներում:

Ելնելով այն հանգամանքից, որ պետությունը (ռեգիստրը) փակ բաժնետիրական ընկերությունների մասնակիցների վերաբերյալ տվյալներ չունի՝ առաջարկվել էր խնդիրը լուծել ԱՃԹՆ-ի հաշվետվողականության և 2023-2024թթ. ստեղծվելիք ԱՃԹՆ տվյալների համակարգված բացահայտումների հարթակի ստեղծման աշխատանքների շրջանակում, որը բիզնեսի համար բարենպաստ (business friendly) կարգավորում չէր կարող համարվել, քանի որ ենթադրում է ընդերքօգտագործող իրավաբանական անձանցից կրկին անգամ տեղեկատվություն պահանջել: Այդ պատճառով Արդարադատության նախարարությունը այդ խնդիրը կդիտարկի իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացման աշխատանքների համատեքստում, որի արդյունքում կապահովվի միասնական ռեգիստրի առկայությունը՝ այդ տվյալներն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կայքում հրապարակելու տեսքով:

3. ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների(ՏՀՊ) ՏՏ համակարգի ստեղծում, ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և շահառուների կարողությունների հզորացում

Միջոցառումներ 40-47 և 48-51

[20] https://eiti.org/board-decision/2021-32

Փետրվարի 3-ին տեղի է ունեցել Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ հրապարակային տվյալների համակարգված բացահայտման թեմայով աշխատանքային քննարկում[21]: Քննարկման մասնակից բազմաշահառու խմբի անդամները, լիազոր պետական մարմինների ներկայացուցիչները և առցանց միացած համայնքների ներկայացուցիչները քննարկեցին տվյալների համակարգված բացահայտումների SS համակարգի տեխնիկական պահանջներին և տվյալների որակին առնչվող հարցերը ՀՀ ԱՃԹՆ ազգային քարտուղարության համար SS խորհրդատվություն մատուցող խորհրդատուի հետ: Քննարկման համար նախօրոք մասնակիցներին էր տրվել Խորհրդատուի կողմից իրականացված ուսումնասիրությունների հիման վրա կազմված տեխնիկական առաջադրանքի նախագիծը, որի վերաբերյալ էլ մասնակիցները հայտնել են իրենց նկատառումները և դիրքորոշումները: Հանդիպման ընթացքում ներկայացված դիտարկումների հիման վրա լրամշակված , ինչպես նաև ԱՃԹ Ն միջազգային քարտուղարություն հետ համաձայնեցված տեխնիկական առաջադրանքը նորից շրջանառվել է ԲՇԽ-ի անդամների մեջ:

Հունիսի 29-ին կայացած ԲՇԽ-ի նիստում ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարությունը հաստատման համար ԲՇԽ-ի քննարկմանն է ներկայացրել ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումների(ՏՀՊ) SS համակարգի ստեղծման տեխնիկական առաջադրանքի վերջնական նախագիծը: ԲՇԽ-ն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) հաստատել է ներկայացված ՏԲՀ տեղեկատվական համակարգի տեխնիկական առաջադրանքը և առաջարկվող մրցութային հանձնաժողովի կազմը: ԱՃԹՆ ազգային քարտուղարության առաջարկով ԷԿԵՆԳ-ի ներկայացուցիչը համաձայնել է նախագահել մրցութային հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվել են ԲՇԽ-ի ՔՀ և բիզնես խմբակցությունների, ազգային քարտուղարության, ՊԵԿ-ի ներկայացուցիչներ: Տեխնիկական առաջադրանքը Հայաստանի թվայնացման խորհրդի հետ համաձայնեցվել է և այն 2024 թվականին կդրվի մրցույթի՝ կատարող ընկերություն վարձելու համար:

Համաշխարհային բանկի «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին» դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) քարտուղարությունը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ մայիսի 4-6-ը Ծաղկաձորում կազմակերպել է եռօրյա դասընթաց-աշխատաժողով[22]՝ «Ռոյալթիներից համայնքներին հատկացվող մասհանումների հաշվին համայնքների կողմից արդյունավետ ծրագրեր մշակելու և դրանք իրականացնելու կարողությունների զարգացում» թեմայով:

---

21 https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2023/02/06/eiti-sdd-discusion/139/

22 https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2023/05/08/royalty-workshop-may-4-6/141/

Դասընթացի նպատակն էր զարգացնել և ամրապնդել ռոյալթիներից մասհանումներ ստացող համայնքների, ինչպես նաև պետական մարմինների պատասխանատու աշխատակիցների կարողությունները և հմտությունները:

Աշխատաժողովին մասնակցել է Հայաստանի Վարչապետի աշխատակազմի, լիազոր պետական մարմինների, մարզպետարանների, ազդակիր համայնքների, ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի շուրջ 40 ներկայացուցիչ:

Դասընթացի օրակարգում ներառված թեմաներն են եղել՝ ընդերքօգտագործողների կողմից վճարվող ռոյալթիներից համայնքների օգտին կատարվող մասհանումների մեխանիզմը և համայնքային բյուջեների համալրումը, այդ մասհանումների գումարներից համայնքների սոցիալ-տնտեսական ծրագրերի կազմումը և համաձայնեցումը լիազոր մարմնի հետ, ծրագրերի միջոցառումների ուղղությունները, ծրագրերի կատարման հաշվետվողականությունը, ծրագրերի կազմման և իրականացման թափանցիկության և հաշվետվողականության կարևորությունը՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների տեսանկյունից:

Օրակարգի թեմաները ներկայացրել են և ներկաների հարցերին պատասխանել են ՀՀ ՏԿԵՆ-ի ընդերքի վարչության ընդերքօգտագործման ոլորտի քաղաքականության մշակման բաժնի գլխավոր մասնագետ, բաժնի պետի պաշտոնակատար Սեդա Հակոբյանը, գլխավոր մասնագետ Նաիրա Բարսեղյանը, ավագ մասնագետ Արմինե Ստեփանյանը, ՀՀ ՖՆ բյուջետային գործընթացի համակարգման վարչության բյուջետային գործընթացի վերլուծական մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ Էդուարդ Բաղդասարյանը, ՀՀ ՇՄՆ ռազմավարական քաղաքականության վարչության պետի տեղակալ Արթուր Ղավալյանը, ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը, փորձագետ Հասմիկ Մանուկյանը: Ներկաները հնարավորություն են ունեցել լսելու ՏԿԵՆ-ի ընդերքի ոլորտը համակարգող նախարարի տեղակալ Հովհաննես Հարությունյանի մեկնաբանությունները և դիտարկումները քննարկվող թեմաների և առաջացող հարցերի վերաբերյալ:

Դասընթաց-աշխատաժողովը հնարավորություն է տվել համայնքների ներկայացուցիչներին զարգացնել սոցիալ-տնտեսական ծրագրեր կազմելու և իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքներն և կարողությունները, իմանալ ԱՃԹՆ-ի ստանդարտի թափանցիկության և հաշվետվողականության պահանջներն ապահովելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ստեղծել միջհամայնքային կապեր՝ լավագույն փորձի փոխանակման համար: Լիազոր մարմինների ներկայացուցիչների համար աշխատաժողովի քննարկումները հնարավորություն են տվել արձանագրել կիրարկվող իրավական ակտերի թերի կողմերը և հետագա լրամշակման ենթարկել դրանք՝ ծրագրերի մշակումն ու իրականացումը առավելագույնս պարզաբանելու և հեշտացնելու համար:

ՀՀ վարչապետի աշխատակազմի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարությունը 2023 թվականի դեկտեմբերի 7-8-ը Համաշխարհային բանկի «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն. լրացուցիչ ֆինանսավորում» դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ Ջերմուկում կազմակերպել է երկօրյա մարզային հանդիպում Սյունիքի, Գեղարքունիքի, Կոտայքի,

Վայոց ձորի մարզերի հանքարդյունաբերական համայնքների շահագրգիռ կողմերի՝ քաղաքացիական հասարակության անդամների, արդյունահանող ընկերությունների և ՏԻՄ ներկայացուցիչների, ԲՇԽ-ի, լիազոր պետական մարմինների մետ 30 ներկայացուցիչների հետ:

Հանդիպման նպատակն էր աջակցել ՀՀ կառավարությանը՝ ապահովելու ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների կատարումը հանրային ներգրավվածության և մասնակցայնության մասով, ինչպես նաև հնարավորություն ընձեռել Հայաստանի հանքարդյունաբերական համայնքների շահագրգիռ կողմերին՝ իրազեկվել ԱՃԹՆ-ի իրականացման և ոլորտի կառավարման ակտուալ մոտեցումների մասին և զարգացնել ԱՃԹՆ-ի հասանելի տվյալների օգտագործման իրենց հմտություններն ու կարողությունները:

Նույն դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարության կողմից 2023 թվականի դեկտեմբերի 14-15-ը Ալավերդու Թուֆենկյան Ավան Ձորագետ հյուրանոցում կայացել է երկրորդ մարզային հանդիպումը, որի թեման էր՝ «Հանքարդյունաբերության սոցիալ տնտեսական ազդեցությունը համայնքներում, Հայաստանի պարտավորությունները որպես Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության անդամ երկիր», որն այդ անգամ կայացել է Լոռու և Տավուշի մարզերի հանքարդյունաբերական ազդակիր համայնքների շահագրգիռ կողմերի համար, որին մասնակցել են թվով 30՝ քաղաքացիական հասարակության ակտիիստներ, հանքարդյունահանող ընկերությունների ներկայացուցիչներ, ՏԻՄ ներկայացուցիչներ, ինչպես նաև ԲՇԽ-ի և լիազոր պետական մարմինների պատասխանատուներ:

Հանդիպումների ժամանակ մասնակիցներին ներկայացվել են ԱՃԹՆ-ի ներդրման արդյունքում հանրային հասանելի դարձած տվյալները և դրանց օգտագործման կարևորությունը՝ կառավարչական և հանրային որոշումներ կայացնելու համար, քննարկվել Հայաստանի կողմից ԱՃԹՆ-ի 2023թ. նոր ստանդարտով երկրների և ընկերությունների նկատմամբ սահմանվող նոր պահանջների կատարման հնարավորությունները:

Քննարկվել է նաև հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ ընդունված ռազմավարությունը, դրա իրագործման ընթացքում քաղաքացիական հասարակության, բիզնես ընկերակցության և համայնքների առաջարկները ներառելու հնարավորությունները, հանքարդյունաբերության ոլորտից ստացված պետական և տեղական եկամտային հոսքերի, այդ թվում՝ ռոյալթիից, բնապահպանական հարկից կատարվող մասհանումների հաշվին ազդակիր համայնքներում զարգացման, բնապահպանական և առողջապահական ծրագրեր կազմելու և իրագործելու կարողությունները, ինչպես նաև դրանց կատարման նկատմամբ հանրային վերահսկողությունը:

4. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրում

Միջոցառումներ 52-53

Աշխատանքային ծրագրի այս բաժնում նախատեսված աշխատանքներ 2023թ-ին չեն կատարվել:

2023թ. հունիսի 29-ին կայացած ԲՇԽ-ի նիստը հաստատել է 2023-2024թթ. աշխատանքային ծրագիրը, որտեղ նշված պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման հետ կապված միջոցառումները (որոնք դադարել էին՝ սպասելով հանքարդյունաբերության մշակվող ռազմավարության մեջ այդ հարցերի արծարծմանը) վերախմբագրվել են՝ հաշվի առնելու համար ՏԿԵՆ-ի գլխավորությամբ հանքարդյունաբերության ռազմավարության գործողությունների ծրագրի իրականացման շրջանակում շահագրգիռ կողմերի, և մասնավորապես, քաղաքացիական հասարակության խմբակցության ակտիվ մասնակցության ապահովումը: Այդ նպատակով ենթադրվում է պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի վերակազմավորում՝ պայմանավորված ԲՇԽ-ի անդամների փոփոխություններով և ՏԿԵՆ-ի կողմից կատարվելիք աշխատանքների համակարգում այնպես, որ դրանցում ապահովվի բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը:

Հաշվետու ժամանակահատվածում մետաղական հանքարդյունաբեության ոլորտը կարգավորող՝ ընդունված կամ ուժի մեջ մտած իրավական ակտերը

Ց Ա Ն Կ

NN ը/կ	Իրավական ակտի անվանումը	Համարը և ամսաթիվը	հղումը

1.	«Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն»	11 մայիսի 2023 թվականի ՀՀ կառավարության N 730-Լ որոշում	https://www.irtek.am/views/act.aspx?aid=121341
2.	«Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները և դրանց առաջնահերթությունները հաստատելու մասին» ՀՀ կառավարության	01.09.2022թ. ՀՀ կառավարության N 1370-Ն որոշում	https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168150
3.	«Համայնքային մասհանումների ծախսման ծրագիրը կամ ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում	01.09.2022թ. ՀՀ կառավարության N 1358-Ն որոշում	https://www.arlis.am/documentview.aspx?docid=168141
4.	«Համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությանը ներկայացվող պահանջները և հաշվետվության ձևաչափը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	04.08.2022թ. ՀՀ կառավարության N 1198-Ն որոշում	https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=166938
5.	«Ազդակիր բնակավայրերի ցանկը սահմանելու մասին» ՀՀ ՏԿԵ նախարարի հրամանը	26.09.2022թ. ՏԿԵ նախարարի թիվ 16-Ն հրաման 02.06.2023 ՏԿԵ նախարարի թիվ 05-Ն հրաման	https://www.arlis.am/documentview.aspx/Res/Res/DocumentView.aspx?docid=188694
6.	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին	03.05.2023թ. ՀՀ կառավարության ՀՕ-150-Ն օրենք	https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178443
7.	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի եվ ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում	21.12.2023թ. ՀՀ կառավարության N 2294-Ն որոշում	https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=187701

8.	«Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում	28.12.2023թ. ՀՀ կառավարության N 2343-Ն որոշում	https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188064

ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի 2023 թվականի կատարողականը կցվում է